

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

#### Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ծանուցում**՝ ծանուցման ենթակա գործունեության իրականացման համար լիազոր մարմնին օրենքով սահմանված կարգով տեղեկացում.

2) **ծանուցման ենթակա գործունեության տեսակ**՝ գործունեության տեսակ, որի իրականացման համար օրենքով պահանջվում է ծանուցում.

3) **ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձ**՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր, ինչպես նաև պետական կամ համայնքի հիմնարկ, որն օրենքով սահմանված կարգով ներկայացրել է ծանուցում, և ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը օրենքով սահմանված կարգով չի մերժվել.

4) **ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառում**՝ գործընթաց՝ կապված ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման հետ.

5) **լիազոր մարմին**՝ մարմին, որին ներկայացվում է ծանուցում, և որը լիազորված է սույն օրենքով սահմանված կարգով իրականացնելու ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառում.

6) **պատշաճ ձևով տեղեկացում կամ փաստաթղթերի ուղարկում**՝ տեղեկացումը կամ փաստաթղթերի ուղարկումը համարվում է պատշաճ ձևով կատարված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով)՝ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի ([www.e-request.am](http://www.e-request.am)) միջոցով՝ դրանց ստացման մասին էլեկտրոնային հետադարձ ծանուցմամբ (այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով, սույն օրենքով սահմանված ներմուծման և արտահանման ծանուցման ենթակա գործունեության տեսակների մասով՝ համացանցային կայք էջում հասանելի [/swis.trade.gov.am/](http://swis.trade.gov.am/) «Միասնական հայտ» համակարգի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով կամ հանձնվել են ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով):

#### Հոդված 24. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան գործունեության լիցենզիա ստացած անձը համարվում է սույն օրենքով սահմանված նույն տեսակի գործունեության իրականացման ծանուցում ներկայացրած անձ:

3. Լիազոր մարմինները պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, սույն օրենքով սահմանված կարգով իրականացնել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործունեության լիցենզիա ստացած անձանց հաշվառում՝ լիցենզիա ստանալու համար ներկայացված տեղեկատվությանը համապատասխան, և հաշվառված անձանց վերաբերյալ սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը, որը այդ անձին տրամադրված լիցենզիայի տրամադրման օրը, ամիսը, տարեթիվն է, հրապարակել իր պաշտոնական կայքում և հրապարակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այդ տեղեկատվությունը տրամադրել պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին:

Սույն պահանջները տարածվում են լիցենզավորման ենթակա գործունեության՝ ցանկացած տեսակ ծանուցման ենթակա գործունեության տեսակ համարվելու դեպքերի վրա:

4. Նոր գործունեությունը ծանուցման ենթակա կարող է ճանաչվել դրա մասին համապատասխան օրենքը պաշտոնապես հրապարակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործունեությունը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ենթակա է լիցենզավորման:

*(պարբերությունն ուժը կորցրել է 03.06.19 ՀՕ-60-Ն)*

5. Ծանուցման ենթակա գործունեության իրականացման պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը պաշտոնապես հրապարակելուց ոչ շուտ, քան վեց ամիս հետո:

6. Սույն օրենքով սահմանված լիազոր մարմիններ են համարվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը համապատասխան գործունեությունը լիցենզավորող մարմինները, եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը չի սահմանում լիազոր այլ մարմիններ:

*(24-րդ հոդվածը լրաց. 27.10.17 ՀՕ-170-Ն, լրաց., փոփ. 03.06.19 ՀՕ-60-Ն)*

**7. 2023 թվականի հունվարի 1-ից ներմուծման և արտահանման ծանուցման ենթակա գործունեության տեսակների պատշաճ ծանուցումն անձանց կողմից ներկայացվում է միայն համացանցային կայք էջում հասանելի /swis.trade.gov.am/ «Միասնական հայտ» համակարգի միջոցով :**